Զդարարության փող

Trumpet's Sound

48-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2017

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարցեր, որ մարդիկ միշտ տալիս են ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Զաքարիայի թերահավատությունը ..... Դոն Սթորմըր

Փոխված ու դարձյալ փոխվող ..... Ռեքս Տիրլավ

Սրբություն..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Անզուգական մարգարիտը..... Քաղվածք

Եբրայեցիներին ուղղված նամակը (3) ..... QMBC պանորամա

Ինչպիսի՞ փոփոխություններ..... Արլին Գույուճյան

Վարժվի՛ր, ոչ թե փորձիր ..... Անն-Մարգրետ Հովսեփյան

Հոգևոր տնտեսության դասեր (1) ..... Մանկանց ավետ. ընկ.

Եթե քո եղբայրը մեղանչի քո դեմ ..... Դոկտ. Զեսլո Բասսարա

Աղոթքի զորությունը ..... Քաղվածք

Ցուցատախտակը..... Ընտրված

Հարցեր, որ մարդիկ միշտ տալիս են

1. Ինչո՞ւ է աշխարհն այսքան վատը:

Աստված ամեն բան կատարյալ ստեղծեց՝ հրեշտակներին, կենդանիներին, երկինքը, բույսերը, ծովային կենդանիներին, թռչուններին, Ադամին ու Եվային… Աստված մարդուն հնարավոր ամենագեղեցիկ վայրում դրեց՝ Եդեմական պարտեզում: Մարդը մեղանչեց Աստծո դեմ: Մեղքի վարձքը մահ է: Անկումից հետո Աստված նրանց դրախտից դուրս վռնդեց: Այս աշխարհը մեր հանգստյան տունը չէ, այն մեր երկինքը չէ, հապա մեզ դեպի հավիտենականություն տանող ճամփան. (Ծննդոց 1-3 գլուխներ):

2. Ինչո՞ւ են մարդիկ այսքան վատը:

Մենք պետք է ընդունենք այն, ինչ Աստվածաշունչը սովորեցնում է. «Քանի որ բոլորը մեղանչեցին և Աստծո փառքից զրկվեցին» (Հռոմ. 3:23): Մեր մեջ բարի բան չկա: Հին Կտակարանը շատ հստակ ասում է, որ նույնիսկ մեկ անձ չեղավ, ով կարողանար Աստծո պատվիրանները պահել: Ոչ ոք չկարողացավ Աստծուն հավատարիմ մնալ: Այնուամենայնիվ, Աստված միշտ Իր ձեռքը մեկնել է մարդկանց՝ ուղարկելով մարգարեներ, Իր Խոսքը…, սակայն մեր մեղավոր բնույթը մնացել է նույնը՝ ատող, ագահ, նախանձ, վրեժխնդիր, հպարտ, խռովարար…

3. Ո՞ւր է Աստված:

Աստված միշտ այնտեղ է և գտնվում է բոլոր նրանց կողմից, ովքեր փնտրում են Նրան: Տիրոջ աչքերը միշտ մեզ վրա են, և Նա պարգևատրելու է յուրաքանչյուրին իր գործի համաձայն՝ բարի, թե չար: Մենք գիտենք Աստծո չափանիշը՝ Աստվածաշունչը, Նրա պատվիրաններն ու օրենքները հայտնի են մեզ: Ո՞ւր է Աստված. «Ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28:20):

4. Ովքե՞ր են պատժվելու:

Ամբարիշտն ու մեղավորը և բոլոր նրանք, ովքեր մերժեցին Քրիս-

տոսին: Բավարար չէ Քրիստոսի մասին իմանալ, անհրաժեշտ է մեղքերից ապաշխարելով, մեղքերի թողության համար Նրան դիմել՝ ասելով. «Տե՛ր, մեղանչեցի: Ների՛ր ինձ»: Խաչի վրայի ավազակն այդպես աղաղակեց՝ ասելով. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո թագավորությամբ» (Ղուկ. 23:42, Հովհ. 3:16):

5. Ինչո՞ւ այսքան ցավ կա:

Երբեն ցավը մոտեցնում է մեզ Աստծուն: Երբեմն այն գալիս է որպես զգուշացում, որ արթուն ու զգաստ լինենք: Երբեմն այն օգնում է մեզ, որ երկնավոր բաները փնտրենք: Հիսուսը միակ անձն է, ումից կարող ենք օգնություն ստանալ: Հիշե՛ք, որ Նա թույլ չի տա, որ մենք մեր ուժից ավելի փորձվենք. Նա մեր բարի Հովիվն է. (Մատթ. 18:12-14, Հովհ. 16:33, 9:1-3):

6. Ովքե՞ր են փրկվելու:

Բոլոր նրանք, ովքեր Հիսուսին կդիմեն ապաշխարությամբ ու հավատքով: «Ուրիշ ո՛չ մեկով փրկություն չկա, որովհետև մարդկանց տրված ուրիշ մի անուն չկա երկնքի տակ, որով մենք կարողանայինք փրկվել». (Գործք 4:12, 2:38, Մատթեոս 18:2-4):

7. Ե՞րբ է լինելու աշխարհի վերջը:

Բայց ինչո՞ւ աշխարհը վերջ պիտի ունենա: Քանի որ Աստված նոր երկինք ու նոր երկիր է ստեղծելու, քանի որ հներն անցան, և ահա ամեն բան նոր է: Հափշտակությունը տեղի է ունենալու, և շատերը հափշտակվելու են՝ Տիրոջը դիմավորելու ամպերի մեջ: Ոչ ոք չգիտի ժամն ու ժամանակը, բացի Հորից. (Ղուկաս 17:34, Մարկոս 13:32, Հայտն. 21:1):

Իմ հարցը՝ քեզ. «Արդյոք պատրա՞ստ ես Արարչիդ դիմավորելու այսօր»: Ապաշխարի՛ր ու մկրտվի՛ր Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Հ. Գ.

❊ ❊ ❊

Զաքարիայի թերահավատությունը

Կարդացե՛ք Ղուկաս 1:5-25

2016 թվականի սեպտեմբեր - հոկտեմբեր թողարկման մեջ ինքներս մեզ հարց տվեցինք, թե որքանո՞վ ենք հետևողական մեր աղոթքների մեջ: Այժմ ավելի ենք մտածելու Զաքարիայի արձագանքի մասին, որն ուղղված էր հրեշտակի պատգամին:

Երբ հրեշտակը հայտարարեց, որ Զաքարիայի աղոթքը լսվել է, և որ նա որդի է ունենալու, քահանան ամենևին պատրաստ չէր նման պատգամ լսելու: Նա հրեշտակին հարցրեց. «Ինչպե՞ս իմանամ սա, քանի որ ես ծեր եմ, իսկ իմ կինը տարիքն առած է»: Այս հարցի արմատն անհավատությունն էր. անհավատություն, որը կործանեց նրա կյանքի կարևոր օրը, և նրան համր դարձրեց, մինչև արու զավակի ծնունդը:

Զաքարիան իրավիճակին նայում էր զուտ մարդկային տեսանկյունից: Չհավատալու արդարացում կա՞ր արդյոք: Եթե պարզապես մտաբերեր իր ազգի պատմությունը, կհիշեր, որ ժամանակին Աբրահամն էլ նման իրավիճակում էր հայտնվել: Աբրահամը՝ 100, իսկ Սառան 90 տարեկան էր: Հավանաբար Աբրահամն ու Սառան ավելի քիչ հավանականություն ունեին սերունդ ունենալու, քան Զաքարիան ու Եղիսաբեթը: Թերևս Զաքարիան դադարել էր զավակի խնդրանքով աղոթելուց, այդուհանդերձ պետք է սովորեր, որ Աստծո մոտ անհնարին բան չկա:

Իհարկե կարող են լինել իրավիճակներ, երբ ճիշտ է աղոթքը դադարեցնելը: Պողոսը մարմնի խայթոցի պատճառով երեք անգամ խնդրեց Աստծուն, որ հեռացնի այն, սակայն Աստված պատասխանեց, որ Իր շնորհքը բավարար է Պողոսի համար: Նա պետք է այդ խնդրանքով աղոթելը դադարեցներ և ապավիներ Աստծուն՝ իր բոլոր կարիքներն ապահովելու համար: Սա մեզ նույնպես կարող է պատահել: Աստված կարող է մեզ համար հստակեցնել, որ այլևս չպետք է շարունակենք աղոթել մեր ուզածը ստանալու համար, այլ պետք է

Իրեն վստահենք, որպեսզի Իր անունը փառավորվի և մեզ օրհնություն լինի:

Զաքարիայի հարցը ցույց տվեց, որ նա չհավատաց հրեշտակին: Նրա հարցը և ավելի ուշ Մարիամի տված հարցը էապես տարբերվում էին իրարից: Մարիամի հարցը վերաբերում էր հղիանալու կերպին, քանի դեռ կույս էր, սակայն նա պատրաստ էր Տիրոջ աղախինը լինելու: Հարց տալը սխալ չէ: Մտածե՛ք Հովհաննես Մկրտչի մասին: Երբ բանտարկված էր, նա կասկածներ ունեցավ, թե արդյոք Հիսուսը Մեսիա՞ն է: Նա իր աշակերտներից երկուսին ուղարկեց՝ Տիրոջը հարցնելու. «Դու Նա՞ ես, որ պիտի գար, թե՞ ուրիշի սպասենք» (Մատթ. 11:3): Տեր Հիսուսը քաղցրությամբ պատասխանեց Մկրտչի հարցին: Սխալ չէ հարցեր տալ այն բանի մասին, ինչը չենք հասկանում, այնուամենայնիվ Զաքարիայի խնդիրն անհավատությունն էր:

Զաքարիան իր անհավատության համար համրությամբ պատժվեց. նա չկարողացավ խոսել, մինչև որ Աստծո խոստումը իրականացավ: Մենք կարող ենք հարցնել, թե արդյոք Զաքարիան նաև խո՞ւլ դարձավ, քանի որ երբ Հովհաննեսը թլպատվեց, մարդիկ ստիպված էին ձեռքի շարժումներով խոսել Զաքարիայի հետ, որպեսզի պարզեն որդու անունը: Պատժի մեջ նաև ամոթի գործոն կար: Համր քահանան չէր կարող ծառայություն կատարել: Մտածե՛ք նրա խնդրի մասին. ինչպե՞ս էր ծառայելու, երբ Թվոց 6:24-26-ի խոսքերով Տիրոջ անունով հավաքված ժողովրդին օրհնելու լիներ: Նա իր ձեռքերը օդ պիտի բարձրացներ, բայց բերանից ոչ մի խոսք դուրս չէր գա: Համր քահանա. սրանից ավելի վատ ճակատագիր անհնար է պատկերացնել Զաքարիայի համար:

Այսուամենայնիվ, եկե՛ք դիտարկենք Աստծո կարեկցանքն ու հավատարմությունը: Քահանայի անհավատությունը լրացուցիչ պատիժներ չբերեց: Աստված չեղյալ չհամարեց որդու խոստումը: Մենք այս փաստով քաջալերվում ենք, «Որովհետև Աստծո պարգևները և կոչումն անդառնալի են» (Հռոմ. 11:29): Այն, ինչ Աստված խոստացավ անել, նաև կատարելու է: Մեր անհավատարմությունը կարող է նշանակել օրհնության կորուստ, սակայն դա չի նշանակի Աստծո

խոստացած բոլոր բարի բաների խափանում: Բոլոր նրանք, ովքեր հավատան, կփրկվեն, սակայն ոմանք չեն ստանալու այն պարգևները, որոնք կարող էին ստանալ. նրանք կփրկվեն, սակայն իբրև թե կրակից անցած (Ա Կորնթ. 3:15):

Զաքարիայի պատմությունն արդիական է: Երբևէ աղոթքի խընդրանքով դիմե՞լ ենք Աստծուն ու մտահոգվել, թե արդյոք Նա կպատասխանի՞ մեզ: Արդյոք շարունակո՞ւմ ենք աղոթել: Մտածի՛ր կյանքում հանդիպած իրական իրավիճակների մասին: Երիտասարդ քրիստոնյա տղան կամ աղջիկը կյանքի ընկեր է փնտրում, ժամանակն անցնում է, սակայն ոչ մի պատասխան: Կամ պատկերացրե՛ք գործազուրկ մի անձի, ով աշխատանք է փնտրում, բայց ուրիշն է ստանում այդ աշխատանքը: Ոմանք ձգտում են առողջ լինել, սակայն թուլանում են…: Յուրաքանչյուր իրավիճակում մարդիկ աղոթում են: Թերևս սկսենք մտածել, թե արդյոք Աստված լսո՞ւմ է մեր աղոթքները և մտահոգվո՞ւմ է այն դժվարություններով, որոնց դիմակայում ենք:

Առնվազն երկու խնդիր կա այստեղ. կա՛մ Աստծո հանդեպ մեր ունեցած հավատքը պիտի կորցնենք, դադարենք Նրան վստահելուց և Նրանից կախյալ լինելուց, կա՛մ էլ պիտի մեկուսանանք և ենթադրենք, որ ոչ մի լավ բան մեզ հետ չի պատահելու:

Մենք պետք է գիտակցենք, որ Աստված մեզ համար ունի Իր հավիտենական նպատակները, և որ միայն Նա գիտի մեր ապագան: Նա մեր խնդրանքներին ավելի ուշ կարող է պատասխանել, կամ մեր խնդրածից ավելի լավը մեզ շնորհել: Իր ժամանակին Նա տալու է մեզ այն, ինչն Իր փառքի և մեր օրհնության համար է:

Եկե՛ք շարունակենք վստահել Նրան և հավատալ, որ Նա մեր աղոթքներին պատասխանելու է:

Դոն Սթորմը

❊ ❊ ❊

Փոխված ու դարձյալ փոխվող

Ինձ հետաքրքիր է իմանալ, թե արդյոք երբևէ վախեցե՞լ եք Պողոս առաքյալի հետևյալ հայտարարությունից. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նա նոր արարած է: Հներն անցան, և ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5:17): Յուրաքանչյուր անձ, ով մի պահ լրջությամբ խորհել է այս խոսքի շուրջ, կընդունի, որ իր կյանքում եղել են պահեր, երբ հինը կարծես թե ամենևին էլ չի հեռացել: Ըստ էության, այն ներկա է: Թվում է, թե հաճախ նոր բնությունն է բացակա, ոչ թե հինը:

Կարծում եմ՝ այս համարը երկար տարիներ օգտագործվել է՝ սնուցելու այն միտքը, թե երբ մարդիկ քրիստոնյա են դառնում, մեկ գիշերվա մեջ վերափոխվում են, և նրանց կյանքն ակնթարթորեն նմանվում է Պողոս առաքյալի և մայր Թերեզայի լավագույն հատկանիշների համատեղ գոյակցությանը: Ես կարող եմ մտաբերել Կիրակնօրյա դպրոցի որոշ երգեր, որոնք կարծես թե այս կասկածելի վարդապետության համակիրներն են: Սակայն մեզանից նրանք, ովքեր իրական աշխարհում են բնակվում, կգտնեն, որ ընդհանուր առմամբ դա այդպես չէ: Պողոսը, ով հստակ և իրատեսական էր մարդկային բնության վերաբերյալ, անկասկած մտադրված չէր, որ մենք իր խոսքից հասկանայինք, թե դա քաղցր երազանք է, որին ակնթարթորեն կարող ենք հասնել:

Այս գաղափարն անիրատեսականորեն բազմապատկում է մեր սպասելիքները միմյանց և ինքներս մեր հանդեպ: Երբ որևէ մեկը չի կարողանում վարվել այնպես, ինչպես պատկերացնում էինք, որ Քրիստոսով նոր ստեղծվածը պետք է վարվեր, ապա հիասթափություն ենք ապրում և զարմանում, թե ինչպես կարող է Քրիստոսով նոր ստեղծվածը այդպես վարվել: Այդ ավերածության ազդեցությունն իմանալու համար փորձե՛ք խոսել նորադարձ քրիստոնյայի հետ, ով արդեն հասցրել է խորապես ցավ ապրել ու հիասթափվել հավատքի մեջ հասուն քրիստոնյայի վարքին նայելու պատճառով: Կամ ի՞նչ ասենք այն քրիստոնյայի մասին, ով մտածում է, թե քանի որ դիմացինը նման ձևով ձախողվել է, գուցե ամենևին քրիստոնյա չի դարձել, թերևս Քրիստոսով նոր արարած չի եղել:

Ինչպիսի՞ն պետք է լինի ակնկալիքների մեջ չափազանց գաղափարապաշտական և դրան զուգորդող խորը հիասթափության մեր արձագանքը: Միգուցե պետք է այլ կերպ մտածենք՝ ասելով՝ եկե՛ք վատն ակնկալենք և երբեք հուսախաբության չենք մատնվի: Թերևս մենք մեզ այնպես պետք է վարժեցնենք, որ ձախորդությունների հետևանքով գոյացած հուսախաբությունները մեր մտքերը չկարողանան խռովեցնել, և միևնույն ժամանակ կարողանանք հիանալ, եթե որևէ մեկը կարողանա իր կյանքում արտացոլել Քրիստոսին: Իհարկե, այդպես ճիշտ չէ: Պողոսը նույնիսկ քայքայվող կորնթացիներին «Հիսուս Քրիստոսի մեջ սրբվածներ» է անվանում և «Նրանում ամեն ինչում հարստացած»: Չեմ կարծում, թե Պողոսը հաճոյախոսում է այստեղ: Որպեսզի կարողանանք աճել և գործել անկատար, սակայն փրկված համայնքում, պետք է գտնենք մի հեռանկար, որը կօգնի մեզ չճնշվելու մարդկային ձախորդությունների ժամանակ, բայց, այնուամենայնիվ, երբեք չհաշտվել միջակության գաղափարի հետ:

Նորից ստեղծված լինելու փոխաբերությունը ճիշտ տեղին է ընտրված: Նորածնի մեջ տեսնում ենք նոր ստեղծագործություն և նոր կյանք: Այն հարուստ է ներուժով: Սակայն յուրաքանչյուր ծնող գիտի, որ մանկությունից մինչև հասունություն ճամփորդության ընթացքում կան բազմաթիվ քերծված ծնկներ, որ պետք է վիրակապվեն, կան շատ թափթփված սենյակներ, որ պետք է կարգի բերվեն, և երբեմն կան հիվանդություններ, որ պետք է բուժվեն: Լավ ծնողը և՛ իրատես է, և՛ հեռատես: Ծնողի սրտում կա սիրող ընդունելություն, նաև կա այն տեսլականը, թե ինչպիսին կարող է դառնալ և ինչպիսին պետք է դառնա զավակն ապագայում: Այդ իմաստով Պողոսի մեկնաբանությունը նոր ստեղծված լինելու կապակցությամբ կատարելապես համապատասխանում է այն բանին, ինչին ականատես եմ եկեղեցուս մեջ, նաև իմ մեջ: Այն ինձ հիշեցնում է, որ ինչ-որ նոր և հիանալի բան է սկսվել կյանքիս մեջ, այն ինձ հիշեցնում է, որ ես և այն մարդիկ, որոնք շուրջս են, հարուստ են աստվածային ներուժով, բայց դեռ կատարյալ չեն. գործը ավարտին չի հասել: Այսպես ես պաշտպանված եմ խորապես հիասթափություն ապրելուց, երբ տեսնում եմ մեկի ձախորդությունը:

Քաղվածք՝ Ռ. Տիրլավի «Արդյո՞ք Աստված իսկապես բարի է» գրքից

Սրբություն

Այսօր մարդիկ առավել քան երբևէ հրաշքներ են փնտրում: Նույնիսկ Աստծուն չհավատացող կամ կրոնից հեռու մարդիկ հրաշքի են սպասում, երբ իրենց կյանքում ամեն բան ձախողվում է:

Ես հավատում եմ հրաշքներին: Առ այսօր Աստված շարունակում է բժշկել, նորոգել ու փոխել մարդկանց կյանքերը: Սակայն երբ հրաշքները դառնում են հավատացյալների ու եկեղեցիների մտահոգության հիմնական նյութը, և նրանք սկսում են Աստծո ողորմությունն ու կամքը փնտրելու փոխարեն բժշկության հրաշք պահանջել, նրանք անտեսում են մեծագույն հրաշքը՝ սրբությունը:

Մեծագույն հրաշքն այն է, որ Աստված անսուրբ մարդուն հանում է անսուրբ աշխարհից, նրան սրբացնում, ապա նորից ուղարկում է անսուրբ աշխարհ ու նրան սուրբ պահում:

«Ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սո՛ւրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, քանզի Ես սուրբ եմ»» (Ա Պետ. 1:15 -16):

Երբ սրբությունն անտեսվում է, քրիստոնյաները կորցնում են մեղքը ճանաչելու և հաղթահարելու կարողությունը: Բայց երբ թույլ ես տալիս, որ Սուրբ Հոգու սրբագործող կրակը բոցավառվի քո կյանքում, Նա քեզ օգնում է մեղքի հանդեպ զգայուն լինելու և ճիշտն ու սխալը զանազանելու:

«Սո՛ւրբ եղեք». սա մի պատվիրան է, որը տվել է մեր Տերը՝ մեր փրկագնման համար խաչի վրա Իր կյանքը զոհաբերած Փրկիչը: Շատ հավատացյալներ մոռանում են, որ ճշմարիտ քրիստոնյայի կատարյալ վիճակը ոչ թե երջանիկ լինելն է, այլ սուրբ լինելը:

Սուրբ Հոգին կարող է բնակվել միայն սուրբ սրտում:

Եթե դու լցված ես Սուրբ Հոգու ներկայությամբ և ապրում ես Նրա կամքի համաձայն, ապա կվայելես ուրախություն, որը տրվում է սրբության փափագ ունեցողներին:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Անզուգական մարգարիտը

Ամրջի տակ ուժեղ քամի բարձրացավ, որին հաջորդեց ալեկոծությունը, ապա ջրի մակերեսը հանդարտվեց: Մի ամերիկացի առևտրական աչքերը սևեռել էր ջրում լողացող իր հնդիկ բարեկամի վրա: Մեկ վայրկյան հետո մարգարիտներ փնտրող սուզակը մեծ ժպիտով դուրս եկավ ջրից: Ռամհոնը, Մորիսին տալով մի մեծ ոստրե, ասաց.

- Սա մի հոյակապ բան է:

Նա բացեց ոստրեն ու բացականչեց.

- Սա սքանչելի բան է: Սրանից ավելի լավ մարգարիտ տեսե՞լ ես:

- Այո՛, - պատասխանեց փորձառու հնդիկը: - Նայի՛ր, այստեղ սև բիծ կա և այնտեղ փոքր սպի կա: Սա նման է քո Աստծո մասին ասածիդ. մարդիկ իրենք իրենց կատարյալ են տեսնում, բայց Աստված բոլոր թերությունները գիտի:

Երբ երկու բարեկամները սկսեցին քայլել փողոցով, մի բոբիկ մարդու տեսան, որ սուր քարերի վրայով էր քայլում և մերթ ընդ մերթ գետինն էր համբուրում: Հնդիկ տարեց մարդն ասաց.

- Սա ուխտավոր է: Ես էլ եմ ցանկանում նոր տարվա առաջին օրն իմ ուխտագնացությունը սկսել: Թեև կչարչարվեմ մինչև Դելի քայլելով, սակայն արժե՛, քանի որ այդպես կարող եմ ապահովել մուտքս Երկինք:

- Ռամհո՛ն, դու Երկինքը չես կարող գնել, - ասաց Մորիսը: - Հիսուսն Իր կյանքը զոհեց, որ հնարավոր դարձնի Երկինք գնալը քեզ համար:

Սակայն հնդիկը չէր կարողանում հասկանալ այս ճշմարտությունը: Մի քանի օր հետո հնդիկ սուզակն իր ամերիկացի բարեկամին հրավիրեց տուն և փոքր, բայց ծանր տուփ ցույց տվեց:

- Սա շատերից եմ պահել, - ասաց նա մտածկոտ, մինչ զգուշությամբ քանդում էր լաթի ծալքերը:

Միջից շատ մեծ փայլուն մարգարիտ հանեց և դրեց իր բարեկամի ափի մեջ: Մարգարիտը չնաշխարիկ փայլ ուներ և շուկայում կարող էր շատ թանկ գնով վաճառվել: Նա հուզմունքով ասաց.

- Ժամանակին մի որդի ունեի: (Մորիսը շատ զարմացավ, քանի որ բարեկամը երբեք չէր ասել իրեն, որ զավակ է ունեցել): - Նա մարգարիտ հանող լավագույն սուզակն էր: Միշտ երազում էր անզուգական մարգարիտ գտնել և մի օր գտավ, բայց իր կյանքի գնով: Սա է այդ սքանչելի մարգարիտը, որ ցանկանում եմ քեզ նվիրել, քանի որ դու իմ լավագույն բարեկամն ես:

Մորիսը ապշել էր: Նա մերժեց այդ նվերն ընդունել և ուզեց այն գնել:

- Ի՞նչ ես ասում, - առարկեց հնդիկը, - երևում է չես հասկանում: Իմ մեկ հատիկ տղան իր կյանքը տվեց սրա համար: Չեմ կարող սա վաճառել, այլ ուզում եմ քեզ տալ որպես նվեր, քանի որ քեզ շատ եմ սիրում:

Մորիսը պապանձվեց: Նա բարեկամի ձեռքերը բռնեց ու ասաց.

- Ռամհո՛ն, տեսնո՞ւմ ես: Դու ճիշտ նույնը պետք է ասես Աստծուն: Դու ջանում ես Աստծուց գնել այդ փրկությունը, մինչդեռ Նա Իր Միածնին զոհեց քեզ համար:

Հնդիկը մտահոգված նայեց Մորիսին ու ասաց.

- Հիմա հասկանում եմ:

Արցունքները վազում էին աչքերից.

- Այո՛, բաներ կան, որ անգին են, քանի որ բացառիկ թանկարժեք են: Հիմա ցանկանում եմ Աստծո ձրի փրկությունն ընդունել:

«Որովհետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է. ոչ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա» (Եփես. 2:8-9):

Քաղվածք՝ «Օրհնաբեր նռնենին» գրքից

Եբրայեցիներին ուղղված նամակը (3)

Վտանգն այն է, որ եթե եբրայեցի քրիստոնյաները չառաջադիմեին իրենց քրիստոնեական հավատքի մեջ, չէին կարողանա դիմակայել հուդայականությանը վերադառնալու գայթակղությանը: Եթե այդպես լիներ, ապա իրենց արարքով խոստովանած կլինեին, որ Քրիստոսը և խաչի վրա Նրա գործը չէր բավարարել իրենց հոգևոր կարիքը: Այդպես անելով՝ նրանք իրենք իրենց նույնականացրած կլինեին այն մարդկանց հետ, ովքեր խաչեցին Տեր Հիսուսին: «Աստծո Որդուն իրենց համար վերստին խաչն են հանում և հրապարակորեն խայտառակում» (Եբր. 6:6):

Անկասկած նամակի հեղինակն այստեղ մտածում էր ճշմարիտ քրիստոնյաների մասին, ովքեր հեռացել էին Քրիստոսով ունեցած իրենց հաստատությունից: Բայց երբեք չի կարելի ասել, որ ճշմարիտ քրիստոնյաները կարող են կորցնել իրենց փրկությունը: Հովհ. 10:28, Եփես. 1:13-14, 4:30, Ա Կորնթ. 1:8, Փիլիպ. 1:6, Ա Պետ. 1:3-5 և այլ սուրբգրային նմանատիպ հատվածներ հավաստիացնում են, որ ճշմարիտ քրիստոնյան հավիտենապես ապահովված է: Քրիստոնյաները կարող են կորցնել ոչ թե փրկությունը, այլ պարգևատրումները, որոնք լինելու են Քրիստոսի ատյանի ժամանակ: (Կարդացե՛ք Ա Կորնթ. 3:15, 9, 27, Բ Պետ. 1:11, Մատթ. 25, 21, Ա Կորնթ. 11:29-30):

Հետո հեղինակն օգտագործում է հողի և անձրևի լուսաբանությունը: Նրանք, ովքեր ընթանում են քրիստոնեական հավատքի մեջ, նման են հողի, որն օգտակար բերք է տալիս և վայելում է Աստծո օրհնությունը, իսկ նրանք, ովքեր շեղվել են հավատքից, նման են հողի, որը փշեր ու տատասկներ է արտադրում. այն այրվելու է և ենթարկվելու է անեծքի (Եբր. 6:7- 8):

Հեղինակը խրախուսում է նրանց շարունակել ընթանալ Աստծո ճանապարհով, օրինակ՝ գործնական սեր ցուցաբերել Աստծո ժողովրդի նկատմամբ և մինչև վերջ ջանասեր լինել: Այսպես անելով՝ նրանք հույսի մեջ հաստատ կլինեին և խոստումները կժառանգեին (Եբր. 6:9-12):

5. Աստծո խոստման անխափանելի լինելը (6:13-20)

Աստված Աբրահամին խոստացավ, որ նրան մեծ ազգի նախահայր է դարձնելու, օրհնելու է, նրա անունը մեծացնելու է, նրան օրհնություն է դարձնելու, և բոլոր ազգերը նրանով են օրհնվելու (Ծննդոց 12:2-3): Ավելի ուշ, երբ Աբրահամն իր որդի Իսահակին զոհ էր մատուցելու, Աստված Իր խոստումը հաստատեց՝ ասելով. «Քեզ օրհնելով կօրհնեմ, և քո սերունդը երկնքի աստղերի և ծովեզրում եղած ավազի պես բազմացնելով կբազմացնեմ, և քո սերունդը կժառանգի իր թշնամիների դուռը. և երկրի բոլոր ազգերը քո զարմով կօրհնվեն, որովհետև Իմ ձայնին հնազանդեցիր» (Ծննդոց 22:17-18): Աբրահամն այս խոստումը գիտակցեց, երբ Իսահակը ծնվեց (Ծննդոց 21:5), սակայն դեռ շատ բան ծածուկ էր: Գաղատացիների 3:16-ից սովորում ենք, որ «սերունդ» բառը Քրիստոսին նկատի ունի, ով պետք է գար: Հետևաբար տեսնում ենք, որ Աբրահամին տրված խոստումն իրոք իրականություն դարձավ այսօր: Տեր Հիսուսը հրեաներին ասաց. «Ձեր հայր Աբրահամը ցանկացավ Իմ օրը տեսնել. և տեսավ այն և ուրախացավ» (Հովհ. 8:56):

Երբ Տերը (այսինքն Եհովան) ասաց Տիրոջը (այսինքն Հիսուսին). «Դու հավիտյան քահանա ես ըստ Մելքիսեդեկի կարգի» (Սաղմոս 110:4), ոչ միայն երդում արեց, այլև ուխտով հաստատեց այն: Կըրկնակի հաստատումով այն անփոփոխելի դարձրեց, թեև դրա անհրաժեշտությունը իրականում չկար: Նա դա արեց, քանի որ Իր խոստումները ժառանգողներին ուզեց ցույց տալ Իր խորհրդի անփոփոխ լինելը (Եբր. 6:17): Այսպիսով, մենք ունենք Աստծո Խոսքը և Աստծո երդումը. անսուտն Աստծո կողմից երկու անփոփոխելի բաներ: Հետևաբար հավիտենականությանը վերաբերող Նրա ասած բոլոր խոսքերին կարող ենք բացարձակ անվերապահություն համարել և քաջալերվել դրանցով:

Մենք, որ քրիստոնյաներ ենք, հույսով ենք լցված, որ Քրիստոսի հետ ենք լինելու Երկնքում: Օգտագործելով նավարկության լեզուն՝ հեղինակը շարունակում է միտքը՝ ասելով. «Այս հույսը, որը որպես հոգու խարիսխ ունենք, ապահո՛վ և անշա՛րժ, որ մտնում է վարագույրից ներս, ուր մեզ համար մտավ մեր նախակարապետը՝ Հիսուսն Ինքը, հավիտանական Քահանայապետ կարգվելով՝ ըստ Մելքիսե-

դեկի կարգի» (Եբր. 6:19-20): Նա նշանակված ժամանակին մեզ հասցրնելու է երկնային ափ, և այդ պահից սկսյալ հավերժական փառքի մեջ ենք ապրելու Նրա հետ միասին (համեմատի՛ր Կող. 1:27):

6. Քրիստոսը գերազանց է Մելքիսեդեկից (6:20 – 7:28)

Նախորդ թողարկումներում տեսանք, որ Մելքիսեդեկն Աբրահամին հանդիպեց, երբ վերջինս, Ղովտին փրկելու առաքելությունից հաղթանակած, վերադառնում էր (Ծննդ. 14:18-20): Տեսանք, թե ինչպես Մելքիսեդեկը, բարձրյալ Աստծո քահանա լինելով, ամրապնդում և խրախուսում էր Աբրահամին: Բայց հիմա պետք է տեսնենք, որ Քրիստոսը՝ որպես քահանա, շատ ավելի բարձր է, քան Մելքիսեդեկը:

Եբրայեցիներին թղթի հեղինակն ասում է մեզ, որ Մելքիսեդեկ անունը նշանակում է «Արդարության թագավոր» և «Խաղաղության թագավոր»: Նրա ազգատոհմը տրված չէ, կարծես թե նա «ո՛չ օրերի սկիզբ ունի, ո՛չ էլ կյանքի վերջ… մշտնջենական քահանա», և դրանով իսկ նա Աստծո Որդու մի գեղեցիկ նախատիպար է, որին հանդիպում ենք Սուրբ Գրքում (Եբր. 7:2-3): Մենք պետք է նշենք, որ Քրիստոսն է մեր արդարությունը, նաև մեր խաղաղությունը (Ա Կորնթ. 1:30, Եփես. 2:14):

Աբրահամի՝ Մելքիսեդեկի կողմից օրհնություն ստանալը ցույց է տալիս, որ Մելքիսեդեկը նույնիսկ հրեա ժողովրդի նախահայր Աբրահամից էլ ավելի մեծ էր: Ավելին՝ Աբրահամն իր տասանորդն է տալիս Մելքիսեդեկին. այդպես անելով՝ նա ընդունում է Մելքիսեդեկի գերազանցությունը: Դարձյալ տեսնում ենք, որ հրեա ժողովուրդն իր տասանորդն էր տալիս ղևտացիներին՝ քահանայական ցեղին, սակայն կարելի է ասել, որ նույնիսկ Ղևին Աբրահամի միջոցով Մելքիսեդեկին տասանորդ տվեց: Դա նշանակում է, որ Մելքիսեդեկը գերազանցում էր Ղևիին և նրա ժառանգներից՝ Ահարոնին:

Ահարոնն ու բոլոր նրանք, ովքեր հետևեցին նրան, ընտրվում էին ըստ իրենց տոհմաբանության, և քանի որ յուրաքանչյուրը մահկանացու էր, պետք է քահանայության ուրիշ գիծ ընտրվեր: Մելքիսեդեկը գալիք բաների շուքն էր կամ նախատիպը. «Դու հավիտյան քահանա ես ըստ Մելքիսեդեկի կարգի» (Սաղ. 110,4, Եբր. 5:6, 10, 7:17,

21): Հիսուսի միջոցով է, որ ավելի լավ հույս ներկայացվեց մեզ, որի միջոցով մոտենում ենք Աստծուն (Եբր. 7:18-19):

Ահարոնյան քահանայությունը տկար էր մի քանի պատճառներով. քահանաների իրավահաջորդություն կար, քանի որ մահն արգելում էր նրանց շարունակել ծառայությունը: Նրանք առօրյա զոհեր պետք է մատուցեին նախ՝ իրենց սեփական մեղքերի համար, հետո ժողովրդի մեղքերի համար: Օրենքը քահանայապետ էր նշանակում այնպիսի մարդու, ով տկար էր և ենթակա էր հիվանդության և անկատարության: Բայց Հիսուսը հավիտյան ապրում է, Նրա քահանայությունը մշտնջենական է, Նրա բարեխոսությունը շարունակական է: Ի տարբերություն Ահարոնի ու նրա որդիների, ովքեր իրենց սեփական մեղքերից մաքրվելու համար զոհեր պետք է մատուցեին, Հիսուսը զոհվեց ժողովրդի համար մեկ անգամ և ընդմիշտ: Նա սուրբ, անարատ, մաքուր, մեղավորներից զատված և այժմ Երկինքների բարձունքներում նստած քահանայապետ է: Ահարոնյան քահանաներն անկատար էին, բայց Որդին հավիտյան կատարյալ է, երդումով նշանակված քահանայապետ է, և Նա մեզ համար ավելի լավ Ուխտի երաշխիք դարձավ (Եբր. 7:21-22):

7. Կրկնություն

Դժվար է պատկերացնել, թե ինչպես ճշմարիտ քրիստոնյան կարող է ետ դառնալ դեպի մի համակարգ, որը հնացած է և անպիտան: Տեր Հիսուսի հետ իսկական հանդիպումը փոխում է կյանքը և մեր մեջ Պողոս առաքյալի սրտի փափագի նման փափագ է արթնացնում, որը կարելի է ամփոփել Պողոսի այս խոսքերով. «Որովհետև ինձ համար ապրելը Քրիստոս է, և մեռնելը՝ շահ» (Փիլիպ. 1:21):

Եբրայեցի քրիստոնյաների խնդիրն այն է, որ նրանց լսելիքները բթացել էին (Եբր. 5:11-12): Ժամանակին նայելով՝ սովորեցնողներ պիտի լինեին, սակայն դեռ քրիստոնեական կյանքի այբուբենը սովորելու կարիքն ունեին: Դրա համար չէին կարողանում դիմակայել հալածանքներին, կեղծ ուսմունքին և հեշտությամբ համոզվում էին, որ անհրաժեշտ է վերադառնալ հուդայականությանը: Բայց հեղինակը արագ նշում է, որ պետք է հասուն դառնան և մանուկների նման չմտածեն (համեմատի՛ր Եփես. 4.14-15):

Մարախ կամ հսկա տապալող

Թվոց 13:1-3

Ելից 3:7 համարում կարդում ենք, որ Աստված Եգիպտոսում ապրող Իր ժողովրդի չարչարանքը տեսավ և նրանց տարիների աղաղակը լսելով՝ Աստված խոստացավ ազատել նրանց եգիպտացիների ձեռքից ու տանել լայնարձակ մի երկիր, որտեղ կաթ ու մեղր է բխում: Սակայն երբ կարդում ենք Թվոց 14:1-3 համարները, տեսնում ենք, որ նույն ժողովուրդը գանգատում է Մովսեսին և Ահարոնին, թե ինչո՞ւ Աստված իրենց Եգիպտոսի երկրից հանելով՝ բերեց Քանան: Տերը Իսրայելի ժողովրդին տվեց երկու առաջնորդ, որ պատրաստեին նրանց անապատի ճամփորդությանը:

Երբ Եգիպտոսից դուրս եկան, հավատքի դասը սովորեցին. Տերը խոստացավ ազատել նրանց և կատարեց Իր խոստումը: Երբ Կարմիր ծովի առջև կանգնեցին, դարձյալ գանգատեցին՝ կարծելով, որ մահանալու են, բայց Տերը հրաշքով ապահով դուրս բերեց նրանց: Անապատում տրտնջացին, որ ուտելիք և խմելիք չունեն. Տերը դարձյալ հոգաց նրանց կարիքները՝ միս, ջուր և մանանա հայթայթելով:

Տերը 2-3 տարի Իր բազուկով առաջնորդեց Իր ժողովրդին Իր ծառայի՝ Մովսեսի միջոցով: Երբ նրանք հասան խոստացված երկիր, Նա Մովսեսին ասաց, որ 12 ցեղերից իշխաններ ուղարկի՝ լրտեսելու այն: Այստեղ հարց կա. երբ Տերը խոստացավ այդպիսի երկիր տալ նրանց, լրտեսի ի՞նչ կարիք կար: Բ Օրինաց 1:22 համարում Մովսեսը հայտնում է, որ լրտեսներ ուղարկելը ժողովրդի որոշումն էր, ոչ թե Աստծունը:

40 օր հետո 12 լրտեսները վերադարձան նույն տեղեկությամբ, ինչ որ Տերը խոստացել էր, սակայն նրանցից տասը ավելացրին. «Բայց այն երկրում բնակվող ժողովուրդն ուժեղ է, քաղաքները պարսպապատ են ու խիստ մեծ. այնտեղ նաև Ենակի որդիներն տեսանք.... մենք մեր աչքին մորեխի պես էինք»: Երբ ժողովուրդը այս տասի տեղեկությունը լսեց, շփոթվեց, վախեցավ ու սկսեց գանգատել, թե Տերն

ինչո՞ւ իրենց այդտեղ բերեց: Մյուս երկու լրտեսները՝ Քաղեբը և Հեսուն, որոնք նույն փորձառության ականատեսներն էին, հանդարտեցնում էին ժողովրդին և քաջալերում, որ գնան ու ժառանգեն երկիրը, ինչպես Տերը խոստացել էր նրանց: Լրտեսներից տասն իրենք իրենց մարախի չափ տեսան դժվարությունների առջև, սակայն մյուս երկուսը Տիրոջ զորությունը տեսան, որ հաղթահարում է ամեն դժվարություն:

Ի՞նչ տարբերություն կար տասի և երկուսի միջև: Տասը հուսահատվեցին իրենց անհավատության պատճառով, իսկ երկուսը քաջալերվեցին իրենց հավատքի պատճառով: Տասը մոռացան Աստծո հրաշքներն անապատի ճամփորդության ընթացքում, երկուսը հիշեցին Տիրոջ հավատարմությունն Իր խոստումները կատարելու մեջ: Տասը տեսան միայն դժվարությունները, երկուսը տեսան Տիրոջ բազուկը դժվարությունների մեջ: Տասը վստահեցին իրենց իմաստությանը, երկուսը՝ Աստծո խոստումին:

Պողոս առաքյալը Փիլիպպեցիներին 1:6-ում ասում է. «Այս բանում վստահ լինելով, թե Նա՝ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցընի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը»: Տերը գործ սկսեց Իսրայել ժողովրդի մեջ և կամեցավ Քանանի երկիրը տալ նրանց: Քանի որ բազմաթիվ անգամ նրանք թերահավատ գտնվեցին իրենց ճամփորդության ընթացքում, չկարողացան ժառանգել այն և 40 տարի թափառեցին անապատում:

Արդյոք այսօր Տերն ի՞նչ ծրագիր ունի մեր անձնական կյանքի համար, մեր եկեղեցու կյանքի համար: Երբ Տերն ասում է՝ գնացե՛ք ու ժառանգե՛ք, Նա Իր խոստումը կատարելու է: Բնականաբար հանդիպելու ենք դժվարությունների, կանգնելու ենք հսկաների առջև, սակայն հաղթությունը Նրանից է: Ուստի հավատա՛նք, որ մեր մեջ բարի գործ սկսողը մինչև Հիսուս Քրիստոսի օրը կատարելու է այն:

Հովան եղբ. Գույումճյան

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր
պատգամներ» գրքից

Ինչպիսի՞ փոփոխություններ են ակնկալվում այն անձից, ով ապաշխարում է և ընդունում է Հիսուսին՝ որպես Տիրոջ

Երբ մարդն ընդունում է Տիրոջը, իր կյանքում փոփոխություն է տեղի ունենում: Այն ոչ միայն հոգևոր ոլորտի փոփոխություն է, այլև անհատականության, վերաբերմունքի, կեցվածքի, լեզվի, մտքի և գործողությունների համընդհանուր հեղաշրջում:

Նախ՝ պետք է ըմբռնենք, թե ինչ է նշանակում ընդունել Տիրոջը: Հիսուսին խնդրել մեր սրտում Իր տեղը գրավել չի նշանակում Նրան տալ մեր սրտի փոքր հատվածը՝ որպես սեփականություն, այլ մեր ամբողջ սիրտը, մեր սրտի յուրաքանչյուր անկյուն Նրան է պատկանում, և մենք ընդունված ենք Նրա ընտանիքի մեջ:

Հիսուսին ընդունելով՝ հոգևորապես որդեգրվում ենք նոր ընտանիքում, և սա նշանակում է, որ պատկանում ենք նոր Հոր: Ընտանեկան մթնոլորտում ծնված ու մեծացած զավակների բնավորությունը էապես ազդված է լինում նրանց ծնողներից: Սա գիտականորեն ապացուցված է: Հետևաբար, Հիսուսի ընտանիքում մեծանալը ենթադրում է, որ պետք է որդեգրենք Նրա հատկանիշներն ու կենցաղավարությունը:

Քանի որ Հիսուսը սուրբ է և մաքուր, մենք, որ ժամանակին մեղավորներ էինք, այժմ պետք է Հիսուսի բնավորության գծերն արտացոլենք մեր կյանքում: Այսպես պետք է լինի, քանի որ Աստված մեզ սուրբ և մաքուր է տեսնում Քրիստոսով. Նա ներել է մեր մեղքերը և այժմ տեսնում է մեզ Հիսուսի կատարելությամբ (Եփես. 4:24):

Մեղավոր ու հանցավոր լինելուց դեպի մաքրված ու անմեղադրելի լինելու միտքն իսկապես պետք է որ իր հետքը թողնի մեր կյանքի յուրաքանչյուր ասպարեզի վրա: Սա նշանակում է, որ մենք հիմա սիրում ենք մեր թշնամիներին, հարգում ենք նրանց, ովքեր հարգանքի արժանի չեն, ներում ենք նրանց, ովքեր ներման արժանի չեն, ha-

վատք ենք ունենում նույնիսկ այն ժամանակ, երբ ամեն ինչ անհույս է, կարեկցում ենք կարիքավորներին, Ավետարանը պատմում ենք՝ օգտվելով ամեն հնարավոր առիթից և ամեն բանում մեր լավագույնն ենք անում Աստծո փառքի համար (Կող. 3:23):

Բ Կորնթացիներին 5:17-ն ասում է, որ երբ ընդունում ենք Տեր Հիսուսին, նոր արարած ենք դառնում: Հոգևոր փոփոխությունը մատնանշող ֆիզիկական որևէ երևույթ չի երևում, սակայն մեր էության ամեն մի մասնիկը Քրիստոսով վերանորոգվում է ու բարեփոխվում: Սա մեզ փոխում է ներսից: Մենք մեր կյանքում սկսում ենք արտացոլել Նրան և հետևել Նրա օրինակին:

Հաշվի առնելով այս ճշմարտությունները՝ վստահաբար կարող ենք ասել, որ երբ ապաշխարում ենք ու հետևում Հիսուսին՝ որպես Տիրոջ, մեր մեջ ամեն ինչ փոխվում է: Այս փոփոխությունն ազդում է մեր յուրաքանչյուր մտքի, գործողության և խոսքի վրա:

Արլին Գույուճյան

Վարժվի՛ր, ոչ թե փորձիր

Կյանքիս մեծ մասը վատնել եմ՝ փորձելով լավ քրիստոնյա դառնալ: Փորձել եմ լինել այնպիսին, ինչպիսին պատկերացնում էի, որ պետք է լինեմ, սակայն հետադարձ հայացք գցելով՝ տեսնում եմ, թե դեռ շատ անելիք ունեմ: Սա պայքար է, որը կարծես թե տարածված երևույթ է քրիստոնյաների մեծամասնության մոտ: Սակայն ո՞րն էր արածիս սխալը: Ինչո՞ւ այդքան շատ հավատացյալներ զգում են, թե մշտապես պետք է բարեփոխվեն և փորձեն ավելի լավը դառնալ:

Ես վերջապես սովորեցի, որ ջանադրաբար փորձելը, ըստ էության, հակառակն էր այն բանի, ինչ իրականում պետք է անեի: Փորձել նշանակում է նվազագույն ջանքով և նվիրվածությամբ անել: Այն պահանջում է ցանկության փոքր նշույլ: Փորձել նշանակում է ամենաչընչին ջանքը գործադրել ինչ-որ բան հաջող անելու համար: Փորձել չի

նշանակում կատարելապես վճռական լինել՝ գործը հաջողության հասցնելու համար:

Աստվածաշունչը չի պատվիրում մեզ, որ պարզապես փորձենք լավ քրիստոնյա դառնալ: Պողոսը Տիմոթեոսին հանձնարարեց, որ իր անձը վարժեցնի աստվածպաշտության մեջ (Ա Տիմ. 4:7): Աստծո Խոսքը «վարժվել» բառը հաճախ է օգտագործում: Եբր. 12:11-ում կարդում ենք. «Ո՛չ մի խրատ նույն պահին ուրախությամբ չի ընդունվում, այլ՝ տրտմությամբ. սակայն հետագայում նրանով կրթվածներին արդարության խաղաղարար պտուղն է տալիս»:

Պատրաստություն, վարժություն, նվիրվածություն, զոհողություն... Սրանք այնպիսի բառեր են, որոնք մեզ ջղագրգիռ են դարձնում: Երբեմն մտածում ենք, թե սրանք համահունչ չեն մեր սիրելի բառերի հետ, որոնցից են սերը, շնորհքը, ողորմությունը, համբերությունը...

Սակայն գիտենք, որ առանց վարժության, ձախորդությունն անխուսափելի է: Զինվորները, մարզիկները, երաժիշտները և նույնիսկ գործարար մարդիկ պետք է զանազան վարժություններ կատարեն, որպեսզի իրենց սովորած գիտելիքները գործնականի վերածեն: Ջութակահարները համերգի ժամանակ չեն փորձում ջութակ նվագել, վազորդները չեն փորձում հաղթել վազքի մրցույթների ժամանակ: Նրանք պատրաստվում են այդ օրվա համար, անհամար ժամեր վարժվում են և կատարում անհրաժեշտ զոհողություններ՝ իրենց նպատակին հասնելու համար:

Թրավիս Ռոբերտսոնը՝ Կալիֆորնիայի անշարժ գույքի և բիզնեսի ռազմագետը, ասել է. «Վարժությունը գործողությունների ծրագիր է պահանջում, այդ ծրագրի հանդեպ նվիրվածություն է պահանջում, մտածելակերպի տեղաշարժ է պահանջում, հաշվետվություն է պահանջում, փորձագիտական օգնություն է պահանջում»:

Այսպիսով, մեր անձերը ինչպե՞ս վարժեցնենք աստվածպաշտության: Աղոթքը և Աստվածաշնչի ուսումնասիրությունը հիմնական բաղադրիչներն են, սակայն մենք պետք է նաև երկրպագենք, հավատարմորեն ծառայենք և հաղորդակցություն ունենանք հավատակիցների հետ: Վարժվի՛ր, ոչ թե փորձիր:

Անն-Մարգարետ Հովսեփյան

Հոգևոր տնտեսագիտության դասեր մանուկների և պատանիների հետ աշխատողների համար

Դաս 1

«Եվ հինգ տաղանդ վերցնողը եկավ և բերեց ուրիշ հինգ տաղանդ էլ ու ասաց. «Տե՛ր, դու ինձ հինգ տաղանդ տվիր, ահա հինգ տաղանդ էլ ավել շահեցի»: Նրա տերն էլ ասաց նրան. «Լա՛վ, բարի և հավատարի՛մ ծառա. քիչ բաների մեջ հավատարիմ եղար, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ»» (Մատթեոս 25:20-21):

Մենք Հիսուս Քրիստոսի ծառաներն ենք, և որպես մեր Տեր՝ Նա ակնկալում է, որ լավ ու հավատարիմ ծառաներ լինենք: Նա մեզ առաջնորդում է մեր անելիքի մեջ, բայց նաև ակնկալում, որ առողջ բանականությամբ շարժվենք, որպեսզի մեր ժամանակը արժևորենք ու ճիշտ ներդնենք: Անշուշտ, պետք է ծրագրենք մեր ռազմավարությունը: Ծառայության քո լավագույն ռազմավարությունը ՆԵՐԴՐՈՒՄԱՆ ռազմավարությունն է:

Ի՞նչ է ներդրումը:

«Ներդրում» բառը հաճախ օգտագործվում է բիզնես շրջաններում՝ ընդհանուր առմամբ փողի առնչությամբ: Բիզնեսմենը փող է ներդնում՝ հավատալով, որ իր բիզնեսը կծաղկի ու լավ եկամուտ կտա: Գումարը ծախսելու և առկա կարիքները հոգալու փոխարեն՝ նա դա ներդնում է՝ ապագայում եկամուտ ստանալու համար: Ուրեմն՝ ներդրումը ներկա ռեսուրսների օգտագործումն է ապագա եկամուտ ստանալու համար:

Մենք ի՞նչ ենք ներդնում:

Եթե բիզնեսմենները փող են ներդնում, մենք՝ քրիստոնյա ծառայողներս, փողից բացի այլ ռեսուրսներ ունենք:

Մենք ժամանակ ենք ներդնում: Ներկա կարիքները հոգալու համար ողջ ժամանակը ներդնելու փոխարեն դրա մեծ մասը ներդնում ենք ապագա վարձքի հույսով: Պողոսը մեզ պատվիրում է. «Ժամանակը ծախու՛ առեք, որովհետև օրերը չար են» (Եփես. 5:16):

Ծախու առնել նշանակում է ետ գնել: Այս բառի մեկ այլ թարգմանություն ասում է՝ «առավելագույնը քաղել»: Մենք պետք է իմաստությամբ ծախսենք ու ներդնենք ժամանակը, եթե ուզում ենք դա ծախու առնել: Բոլորն էլ իրենց տրամադրության տակ նույն ժամանակն ունեն: Կարևորն այն է, թե դրա հետ ինչպես են վարվում:

Մենք ներդնում ենք մեր աշխատանքը: Անմիջական արդյունքների համար աշխատելու փոխարեն՝ նպատակդրվում ենք ապագային՝ մեր ներկա աշխատանքի հիման վրա:

Մենք ներդնում ենք մեր գումարները: Ներկա նպատակի հասնելու համար դա ծախսելու փոխարեն՝ դրա մեծ մասը ներդնում ենք մի բանի մեջ, որ կարող ենք ապագայում տեսնել:

Ինքներս մեզ ենք ներդնում, մեր սերը, հետաքրքրություններն ու մասնակցությունը: Մեր ունեցածից կառչելու փոխարեն՝ դա ներդնում ենք ուրիշ տեղ՝ չնայած գնին ու զոհաբերությանը: Գիտենք, որ երկարաժամկետ կտրվածքով սա լավագույն ռազմավարությունն է, որին Տերը կպատասխանի. «Բարի և հավատարի՛մ ծառա….»:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Եթե քո եղբայրը մեղանչի քո դեմ

«Եթե եղբայրդ քեզ դեմ մեղանչի, գնա՛ և հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա մենակ եք. եթե քեզ լսի՝ շահած կլինես քո եղբորը» (Մատթ. 18:15):

Աստծո թագավորության մեջ սերը մեծագույն արժեքն է: Ընդհարումը փակում է սիրո ճանապարհը: Հոգևոր աճի համար հավանա-

բար ավելի մեծ մարտահրավեր չկա, քան այն, թե ինչպես ենք վարվում ընդհարումների ժամանակ:

Ընդունի՛ր ընդհարումը

Ընդհարումն իրական է: Դա մարդկային էության մի մասն է: Ընդհարման բացակայությունը հավասար չէ հասունության: Բոլոր եկեղեցիներն ու քրիստոնյաներն ունենում են ընդհարումներ: Երբեմն դրա պատճառը մեր եսասեր, մեղավոր ու բարդ լինելն է, բայց հաճախ դա լինում է, որովհետև մենք տարբեր ենք: Մեր տարբեր խառնվածքներով, միջավայրով ու փորձառությամբ պայմանավորված՝ հավատքը, կյանքն ու ծառայությունը տարբեր կերպ ենք դիտում: Որքան հաճախ ենք կարծում, թե մենք ավելի լավ գիտենք (որովհետև դա մեզ համար ավելի լավ է) և ծանր է փոխզիջման գնալը: «Սիրտն ամեն բանից ավելի նենգավոր է ու խիստ չար, ո՞վ կարող է հասկանալ այն» (Երեմ. 17:9):

Ընդհարման կապակցությամբ պետք է ինչ-որ բան ձեռնարկել

Ինչո՞ւ պատրաստ չենք լուծում տալու ընդհարմանը: Պատճառը հպարտությունն է, վախն ու համառությունը:

«Գնա» նշանակում է «գնալ» կամ «մոտենալ»: «Գնա» չի նշանակում «խուսափել» կամ «աղոթել», կամ «մտածել», կամ «մոռանալ»: Ինչո՞ւ եք զայրանում: Երեք գլխավոր պատճառով՝ վիրավորանք, հիասթափություն և վախ:

Պետք է գնալ տվյալ անձի մոտ. ո՛չ երրորդ կողմի, ո՛չ միջնորդների կամ ընկերների:

Պետք է առանձին խոսել նրա հետ: Պետք է դիմացինին նրբանկատորեն վերաբերվել այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին:

Հարկավոր է բաց լինել՝

1. հստակ արտահայտվելով, թե ինչ ես նկատել,
2. բացատրելով, որ դա վիրավորել է քեզ,
3. ասելով, թե ինչ հետևանքներ է ունեցել,
4. խնդրելով քո ուզած փոփոխությունը: Փոփոխությունն ավելին

է, քան լոկ ներողությունը, թեպետ ներողությունը հաճախ լավ սկզբնակետ է:

5. Հաշտության ուղի բռնել: Նպատակը փոխհարաբերությունը վերականգնելն է: Նպատակը ճիշտ լինելն ապացուցելը չէ, ոչ էլ իրավիճակից խուսափելը, ոչ էլ շրջվելն ու մոռանալը:

Ընդհարումն իրական վտանգ է

Մեզանից ոմանք չափազանց վնասաբեր ընդհարումներ են ունեցել: Լուրջ ընդհարումների մեջ համբավը կարող է կործանվել, վստահությունը՝ ոտնահարվել, բարեկամությունը՝ խաթարվել և կյանքեր խորտակվել: Ընդհարումը կարող է ահռելի վնաս հասցնել անհատներին ու եկեղեցուն: Ընդհարումը վտանգում է այն միասնությունը, որն այնքան կարևոր է քրիստոնյաների կյանքի ու վկայության համար:

Ընդհարումն աճի ու փոփոխության հնարավորություն է ընձեռում

Պարտադիր չէ, որ ընդհարումը քայքայիչ լինի: Հնարավոր է՝ ընդհարման միջոցով հասնել ամուր փոխհարաբերության, ավելի խորը վստահության, լայն հեռանկարների, նոր եռանդի և ավելի կուռ միասնության ու նվիրման: Ընդհարումն աճի ու փոփոխության հնարավորություն է ընձեռում: Եթե ճիշտ վերաբերվենք ընդհարմանը, և մարդիկ հարցի վրա կենտրոնան (ոչ թե անձանց), ապա նոր եռանդը, նվիրումն ու վստահությունը կբխեն: Ընդհարումը վերջը չէ: Դա կարող է մի նոր ու հզոր բանի սկիզբ դնել:

Որոշումներ, որ պետք է կայացնել

1. «Եթե դու ինձ հետ դժվարություններ ունես, արի անձամբ ինձ մոտ, ոչ թե ուրիշների: Մենք ամեն ինչում անկեղծ կլինենք և ձեռքից եկածը կանենք հարցի վերաբերյալ»:

2. «Եթե խնդիրներ ունենամ քեզ հետ, ես անձամբ քեզ մոտ կգամ»:

3. «Եթե որևէ մեկը խնդիր ունի ինձ հետ և գալիս է քեզ մոտ, նրան ինձ մոտ ուղարկիր: Ես նույնը կանեմ քեզ համար»:

4. «Եթե որևէ մեկը ոչ մի դեպքում չի գալիս ինձ մոտ, նրան ասա՝ արի գնանք մեր առաջնորդի մոտ: Ես նույնը կանեմ քեզ համար»:

5. «Զգույշ եղիր ինձ կարդալիս: Ես նույնը կանեմ քեզ համար: Անորոշ հարցերում մենք ուրիշների զգացմունքներն ու մտքերը կարդալու ճնշման տակ չենք լինի: Մտադրությունները սխալ կարդալը դյուրին է»:
6. «Եթե մի բան գաղտնի է, ապա պետք է մնա գաղտնի»:
7. «Եթե դու կամ որևէ մեկն ինձ մոտ գաք վստահելով, ես դրա մասին չեմ հայտնի, քանի դեռ տվյալ անձը չի պատրաստվում վնաս հասցնելու իրեն կամ մեկ ուրիշին, կամ եթե ֆիզիկական կամ սեռական բռնության չի ենթարկվել երեխա: Նույնն ակնկալում եմ քեզանից»:
8. «Անանուն կամ չստորագրված նամակներ կամ երկտողեր չեմ կարդալու»:
9. «Ես կեղծիք չեմ բանեցնելու: Թույլ չեմ տա, որ իմ դեմ կեղծիք բանեցնեն: Թույլ չեմ տա, որ ուրիշները փորձեն իմ միջոցով քո դեմ կեղծիք բանեցնել»:
10. «Ես քո «գլխին» քարոզ չեմ կարդալու: Հանդիմանությունը կթողնեմ Սուրբ Հոգուն»:

Զգուշացումներ ու խորհուրդ Աստվածաշնչից

«Լեզուն էլ մի կրակ է՝ անիրավության մի աշխարհ: Լեզուն այնպես է դրված մեր անդամների շարքում, որ ամբողջ մարմինն է ապականում և կրակով վառում է մեր գոյության ընթացքը. ու ինքը գեհենի կրակով է բռնկված: Բայց ոչ մի մարդ չի կարող լեզուն նվաճել. այն անզուսպ չար է, մահաբեր թույնով լեցուն» (Հակոբ. 3:6, 8):

«Պահի՛ր քո լեզուն չարությունից ու շուրթերդ՝ նենգություն խոսելուց» (Սաղ. 34:13):

«Բայց Ես ձեզ ասում եմ, թե ամեն դատարկ խոսքի համար, որ խոսում են մարդիկ, դատաստանի օրը հաշիվ պիտի տան» (Մատթ. 12:36):

Դոկտ.՝ Չեսլով Բասսարա

(www.proword.eu)

Աղոթքի զորությունը

Տե՛ր Աստված, Դու մեզ հզոր զենք ես տվել, իսկ մենք թույլ ենք տվել, որ այն ժանգոտվի: Մենք թույլ ենք տվել, որ այդ հզոր ուժը անտարբերության մատնվի, և այն նիրհել է: Մի՞թե սեփական մարմնի հանդեպ հանցագործություն չի լինի, եթե մարդուն տան աչք, բայց նա չցանկանա այն բացել, կամ տան ձեռքեր, բայց նա չցանկանա դրանք բարձրացնել....

Տե՛ր, Դու արևին լույս ես տվել, և այն փայլում է այդ լույսով, աստղերին էլ ես տվել լույս, և նրանք առկայծում են, Դու տվել ես քամուն ուժ, և նա փչում է:

Տե՛ր, Դու Քո զավակներին տվել ես մի պարգև, որն այս ամենից առավել է, բայց նրանք չեն օգտվում այդ պարգևից: Նրանք գրեթե մոռացել են, որ կարող են օգտվել այդպիսի ուժից և շատ հազվադեպ են օգտագործում այն: Բայց չէ՞ որ այդ զենքը կարող է հազարավոր մարդկանց օրհնության առիթ հանդիսանալ:

Հռոմեական կայսր Կոնստանտինը տեսել էր, որ հին ժամանակների ոսկեդրամների վրա կայսրը պատկերված է հաղթական դիրքով կանգնած: Իսկ նա, հակառակը, հրամայեց, որ դրամի վրա իրեն պատկերեն ծնկած.

«Հենց ա՛յս ճանապարհով եմ ես հաղթանակին հասել»:

Մենք երբեք հաղթանակ չենք տանի հենց այն պատճառով, որ չենք աղոթում: Վերադարձի՛ր Աստծուն և խոստովանի՛ր Նրան, որ թեև ունեիր այդ զենքը, բայց պատերազմի օրը փախուստի դիմեցիր:

Եթե հոգիները չեն գալիս ապաշխարության, դա ոչ թե այն պատճառով է, որ Աստված չի կարող փրկել, այլ որովհետև դուք չեք պայքարում մեռնող մեղավորների դարձի գալու համար այնպես, ինչպես բժիշկն է ծննդաբերության ժամանակ պայքարում ծնվող փոքրիկի կյանքի համար:

Չարլզ Սպերջեն

Ցուցատախտակը

Մի կույր տղա նստել էր շենքի աստիճանների վրա: Ոտքերի առջև գլխարկ կար՝ մեջը մի քանի լումա: Նա ցուցատախտակ էր բռնել՝ վրան գրված. «Կույր եմ. խնդրո՛ւմ եմ օգնեք»: Մինչ այդ անցորդներից մեկը մի քանի լումա հանեց գրպանից և գլխարկի մեջ դրեց, ապա վերցրեց ցուցատախտակը, բաներ գրեց ետևի կողմի վրա ու ետ դրեց այն, որպեսզի անցորդները տեսնեն նոր գրությունը: Դրանից հետո գլխարկը սկսեց արագ լցվել: Շատերը սկսեցին դրամ տալ կույր տղային:

Կեսօրից հետո այն մարդը, որ փոխել էր ցուցատախտակի գրությունը, վերադարձավ՝ տեսնելու, թե ինչպես էր տղայի կացությունը: Կույրը ճանաչեց նրա ոտնաձայնը և հարցրեց.

- Պարո՛ն, դո՞ւք էիք, որ այս առավոտ փոխեցիք իմ գրությունը: Արդյոք ի՞նչ էր ձեր գրածը: Մարդն ասաց.

- Միայն ճշմարտությունը գրեցի. քո ասածը գրեցի, բայց ուրիշ ձևով. «Այսօր գեղեցիկ օր է, բայց ես չեմ տեսնում»:

Երկու գրություններն էլ բացատրում էին այս տղայի վիճակը, սակայն առաջինը պարզորեն ասում էր, որ տղան կույր է, իսկ երկրորդը մարդկանց ուշադրությունը անդրադարձնում էր այն փաստին, թե նրանք որքա՜ն բախտավոր են, որ կույր չեն: Արդյոք զարմանալո՞ւ ենք, որ երկրորդ գրությունը շատ ավելի ազդեցիկ եղավ:

Այս պատմությունից սովորում ենք շնորհակալ լինել մեր ունեցածի համար, նաև ստեղծագործող և բարեփոխող: Մտածե՛նք ուրիշ ձևով և դրական: Երբ կյանքը հարյուր պատճառ է տալիս լացելու համար, նրան ցո՛ւյց տուր, որ հազար պատճառ ունես ժպտալու: Հիշի՛ր անցյալդ առանց ափսոսանքի, վստահությամբ դիմագրավի՛ր ներկայիդ և ապագայիդ համար պատրաստվի՛ր անվախությամբ: Հավատքդ պահի՛ր և վախդ վանի՛ր: